

Ձկներ

Ծովում ձկները կուլ են տալիս իրենցից ավելի փոքր կամ հավասար ձկներին:

Ենթադրենք, այսպիսի իրավիճակ է: N հատ ձկներ շարված են իրար կողքի մեկ գծի վրա: Հայտնի է նրանցից յուրաքանչյուրի չափը: Ամենամեծ ձուկը միակն է, այսինքն, եթե գտնենք ձկներից մեծագույնին, կպարզենք, որ նույն չափի երկրորդ ձուկ չկա: Յուրաքանչյուր ձուկ կարող է կուլ տալ իր աջ կամ ձախ հարևանին, եթե չափերով նրանցից մեծ կամ հավասար է:

$N - 1$ անգամ իրար կուլ տալուց հետո, վերջում կմնա այն ձուկը, որը սկզբում ամենամեծն էր: Գրեք ծրագիր, պարզելու համար, թե այդ ձուկը մինիմումը քանի ձուկ է կուլ տվել:

Մուտքային տվյալներ

Ստանդարտ մուտքի առաջին տողում տրված է թեստերի $t(1 \leq t \leq 100)$ քանակը: Ապա տրված են t հատ մուտքային տվյալների հավաքածուներ: Յուրաքանչյուր հավաքածու բաղկացած է երկու տողից: Առաջին տողում տրված է ձկների $N(1 \leq N \leq 100)$ քանակը: Երկրորդ տողում տրված են մեկ բացատանիշով իրարից անջատված N բնական թվեր՝ իրար կողք շարված ձկների չափերը: Այդ թվերից յուրաքանչյուրը 100-ից մեծ չէ: Երաշխավորվում է, որ մեծագույն արժեքը չի կրկնվում:

Ելքային տվյալներ

Ստանդարտ ելքում պետք է արտածել t թիվ՝ մուտքային տվյալների t հավաքածուների պատասխանները:

Օրինակ

մուտք	ելք
3	2
5	0
7 9 10 5 1	1
1	
5	

2	
5 10	

Օրինակի պարզաբանումը

Այս օրինակում կա մուտքային տվյալների 3 հավաքածու: Առաջինում կա 5 ձուկ: Ամենամեծ ձկան չափը 10 է: Նա մինիմումը կուլ կտա 2 ձուկ: Երկրորդում N -ը 1 է, հետևաբար պատասխանը 0 է: Երրորդում կա 2 ձուկ, մեծ ձուկը մյուսին կուլ կտա, պատասխանը 1 է: